

ԲԱՆԱՎԵՃԵՐ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ΔΙΣΚΥΣΣΙΗΝ Ι ΟΒΣΥΨΔΕΝΙΑ

ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏԸ ԵՎ «ՏԱՐԵԳԻՐՔԻ» ՀԵՂԻՆԱԿԻ ՀԱՐՅԸ

Պատմ. գիտ. դոկտոր Լ. Հ. ԲԱՔԱՅԱՆ

Կիլիկյան հայկական թագավորության պետական, ռազմա-քաղաքական, դիվանագիտական ականավոր գործիչներից է եղել Հեթում I թագավորի եղբայր, հայոց զորքերի սպարապետ Սմբատը: Նա միաժամանակ զբաղվել է իրավագիտությամբ: Այս ասպարեզում էլ նա իրեն դրսևորել է իբրև խորագետ իրավաբան-օրենսգիր: Մինչև նրա «Դատաստանագրքի» ասպարեզ գալը, Կիլիկյան թագավորության տարածքում գործադրել են հիմնականում Անտիոքի խաչակիր իշխանության օրենսգիրքը՝ «Անսիզք Անտիոքայ», որը Սմբատ սպարապետը թարգմանել էր ֆրանսերենից հայերեն և քանի որ «Անսիզքի» ֆրանսերեն բնագիրը չի պահպանվել, ուստի հետագա դարերում նրա մասին գաղափար են կազմել Սմբատի թարգմանության շնորհիվ: Սմբատը, սակայն, չի բավարարվում ֆրանկ օրենքների թարգմանությամբ, նա շուտով համոզվում է, որ դրանք չեն համապատասխանում հայկական թագավորության պայմաններին և չեն արտացոլում տիրող հարաբերությունները, ավանդույթներն ու սովորույթները: Մինչդեռ զարգացող ու ծաղկում ապրող ֆեոդալական հարաբերությունները, նոր ապրելակերպը, բուռն թափով վերելք ապրող ֆեոդալական քաղաքները, քաղաքային կյանքը, առևտուրն ու արհեստագործությունը անհետաձգելիորեն պահանջում էին գործադրության մեջ դնել նոր պայմաններից բխող օրենքներ: Պետականորեն մտածող Սմբատ սպարապետը իրականացնում է օրվա այդ պահանջը: Օգտվելով Մխիթար Գոշի «Դատաստանագրքից» և մասամբ «Անսիզքից», 1265 թ. ստեղծում է ազգային դատաստանագիրք, որը և միջնադարյան իրավագիտության բացառիկ կոթողներից մեկն է. դրանով Սմբատը անջնջելի հուշարձան է թողել իր ժամանակի և դարերի համար:

Սմբատ սպարապետի գրական ժառանգությունից մեզ են հասել նաև նամակներ, որոնցից պատմական առումով առանձնապես կարևոր նյութեր է պարունակում 1247 թ. Սամարղանդից Կիպրոսի թագավոր Հենրիխ Լուզինյանին նրա գրած նամակը:

Սմբատ սպարապետի անունով մեզ է հասել նաև մի համառոտ ժամանակագրություն՝ «Տարեգիրք»: Սկսած XVIII դարի վերջից մինչև այսօր հայ և օտար հայագետներն ու արևելագետները, բացառությամբ Մ. Չամչյանի և Գ. Ալթունյանի, անվերապահորեն այդ տարեգրքի հեղինակ են համարել Սմբատ սպարապետին:

Մ. Չամչյանը սկզբում այդ «Տարեգիրքը» համարել է անհայտ հեղինակի գործ, իսկ Սմբատ սպարապետի մասին հիշատակում է այն հեղինակների

շարքում, որոնց գրվածքները իրեն չեն հասել¹։ Այդ պատճառով իր «Պատմութիւն» առաջին հատորում օգտագործված աղբյուրների թվում «Տարեգրքի» մասին ոչինչ չի ասում։ Հետո միայն, երրորդ հատորում ենթադրաբար գրել է. «Թուի լինէր Սմբատ Կիլիկեցի»², առանց ակնարկելու սպարապետին, այն դեպքում, երբ Սմբատ սպարապետի գործունեության մասին պատմում է բաժնական հանգամանորեն։

Գ. Ալթունյանն էլ իր «Մոնղոլական արշավանքները» աշխատության մեջ վերապահություն անելով, գրում է, թե Սմբատ սպարապետի անունով մեզ հասել է այսպես կոչված «Տարեգրութիւնքը», որը համառոտակի պատմում է 951—1336 թթ. անցքերը³։ Սակայն Սմբատ սպարապետին վերագրած «Տարեգիրքն» ընդգրկում է 951—1274 թթ. ընկած պատմաշրջանի իրադարձությունների շատ համառոտ նկարագրությունը, հետագա շարադրանքն ուրիշներին է։ Նրա առաջին մասի նյութը (951—1136 թթ.) հիմնականում վերցված է Մատթեոս Ուոհայեցու «Ժամանակագրությունից» («Տարեգրքի» վերջին՝ Վենետիկյան հրատարակության 1—160 էջերը, իսկ ամբողջը բաղկացած է 255 էջից)։ 1136—1220-ական թթ. պատմության նյութը վերցված է Գրիգոր Երեցի, Միքայել Ասորու և ուրիշների, հավանաբար նաև նույն ժամանակագիրների աշխատություններից։ Իսկ 1220-ական թթ. կեսերից մինչև 1274 թ. տարեգիրը հանդես է գալիս արդեն իբրև ականատես, ականջալուր և գործող անձ։ Այս մասում էլ, սակայն, նա պահպանել է շարադրման նույն ոճը, այսինքն կարճ հաղորդումներով դեպքերի թվարկումն ըստ տարիների՝ տալով իր շարադրանքին, փաստորեն, հիշատակարանի բնույթ։

«Տարեգիրքը» պահպանվել է երեք խմբագրություններով և ունի երեք հրատարակություն։ Նրանցից մեկը գտնվում է Մատենադարանում (երեք՝ մեկը մյուսից արտագրված օրինակներով՝ 1900, 4337 և 4584 համարների տակ), մյուսը՝ Փարիզում, իսկ երրորդը, որն ամենահինն ու ավելի ամբողջականն է՝ Վենետիկում։ Էջմիածնի (ներկայումս Մատենադարանի) ձեռագիրը 1856 թ. հրատարակվել է Մոսկվայում, Փարիզինը՝ 1859 թ. Փարիզում և Վենետիկինը՝ 1956 թ. Վենետիկում։ Նրա հրատարակիչ Սերոբե Ազըլյանը այդ ձեռագրի գրչության ժամանակը ենթադրաբար համարում է 1280—1315 թթ.։ Իր ձեռքի տակ եղած ձեռագրի պակաս տեղերը Ս. Ազըլյանը լրացրել է ար-

¹ Մ. Չամչյան, Պատմութիւն Հայոց, հատ. Ա, Վենետիկ, 1784, էջ 18։

² Նույն տեղում, հատ. Գ, Վենետիկ, 1786, էջ 337։ «Տարեգրքի» հրատարակիչներից Ս. Ազըլյանը գրում է. «Չամչյան 1780 ատենները, ծանօթ է կիլիկեցուց պատմիչի մը, որմէ օգտուած է իր Հայոց պատմութեան Գ հատորին խմբագրութեան համար, ուր կը կոչէ զայն «ականատես պատմիչ Կիլիկեցուց» որ թուի լինել Սմբատ Կիլիկեցի» (հատ. Դ, էջ 335), սակայն Սմբատ սպարապետի հաւանական օրինակներու գիտով՝ տեսնուեցաւ որ Չամչեանի տեսածը շատ աւելի ընդարձակ ժամանակագրութիւն մը եղած ըլլալու էր, հաւանօրէն Սմբատի հետևողութեամբ եղած խմբագրութիւններ, զանազան դարերու և հեղինակներու, ԺԳ եւ մինչև ԺԷ դար» («Սմբատայ սպարապետի Տարեգիրք, Վենետիկ, 1956, Առաջաբան, էջ Թ, ծան. 4)։

Այս կապակցութեամբ «Տարեգրքի» Մոսկվայի հրատարակիչ Ռսկան Հովհաննիսյանը նկատում է, թե Չամչյանը, բերելով մի հատված, ուր խոսվում է եփպտացիների՝ դեպի Կիլիկիա 1335 թ. կատարած արշավանքի մասին, կարծիք է հայտնել, թե դա կարող է Սմբատ Կիլիկեցու գրածը լինել («Սմբատայ Սպարապետի եղբօր Հեթմոյ առաջնոյ արքայի Հայոց Պատմութիւն Յունացի Կոստանգնուպօլիս և Հայոց Մեծաց ըստ կարգի ժամանակաց», Մոսկվա, 1856, Առաջաբան, էջ Ը)։

³ Գ. Ալթունյան, Մոնղոլական արշավանքները, Վաղսրշապատ, 1913, էջ 40։

տատապելով փարիզյան հրատարակությունից⁴, «խորհելով՝ որ ներկա հրատարակութիւնը ձեռք առնող ուսումնասէրը պիտի ախորժեր աչքի առջեւ ունենալ Հայ Կիլիկիոյ լաւագոյն ժամանակագրին՝ Սմբատ Գունտրստապլի ամբողջական գործը»⁵, — գրել է նա, համոզված լինելով, որ իսկապէս ինքը դրանով ավելի ամբողջական է գարձել բնագիրը:

«Տարեգրքի» առաջին հրատարակիչ Ոսկան Հովհաննիսյանը իր Առաջաբանում գրում է. «Պատմաբանս այս (իմա՝ Սմբատը) անուամբ և եթէ էր ծանուցեալ բազմաց ի մերոց մատենագրաց, գուցէ և ամենեցուն...»:

... Իսկ արգ յերևան գայ նա և իւրովն գրաւորական երկասիրութեամբ, Պատմութեամբս ասեմ՝ զոր փութամս հրատարակել տպագրութեամբ ի վայելումն բարեմիտ վերժանողաց և բանասիրաց Ազգիս մերոյ»: Այնուհետև Ոսկանը եղբակացնում է, թե «ի բուն բանից Հեղինակիս ցուցանի, թէ է Սմբատ Սպարապետ Գունտստապլն կոչեցեալ՝ եղբայր Հեթմոյ Ա արքային Հայոց»⁶:

Այժմ տեսնենք, թե որոնք են այն փաստարկները, որ կովան են հանդիսացել կամ հիմք տվել բանասերներին անվերապահորեն Սմբատ սպարապետին «Տարեգրքի» հեղինակ համարելու:

Մոսկվայի և Փարիզի հրատարակություններում կարդում ենք. «Ի թուին ՈՄԷ (1208) ծնաւ Սմբատ գունդուստապլն քարգմանող պատմութեանս»⁷: Լեւոն II-ի թագադրման կապակցությամբ էլ գրված է, թե նա «եւ ուր իմանայր՝ թէ գոյ այր իմաստուն և գիտուն, և աջող ի գործ կամ ի զինուորութիւն, կամ ի խօսս և ի պատասխանիս, յղէր և կոչէր խոստմամբ, և հանգուցանէր պարգևօք. յորոց մի ես եմ Սմբատ սպարապետ քարգմանող տառիս և պատմութեանս»⁸: Առաջին վկայությունը Վենետիկի հրատարակությունում չկա: Երկրորդ վկայությունը այստեղ վերջանում է «պարգևօք» բառով, մեր կողմից ընդգծված նախադասությունը չի գրված⁹:

Երկու տեղ հեղինակն իր մասին, իբր, առաջին դեմքով է խոսում. «Թագաւորահայրն և ես Սմբատ Գունտստապլս, մտաք ի Տարսուս»¹⁰, «Ի թուին ՈՂԷ գնացի ես Սմբատ Գունտստապլս ի Թաթարըն. և ի թուին ՈՂԹ դարձայ առ իմ եղբայրն Հեթում թագաւորն»¹¹: Նույն հատվածում մի քանի տեղ էլ գրում է հոգնակի առաջին դեմքով. «Մեք դիպաք»¹², «Ի վերայ մեր»¹³, «զի ունէաք»¹⁴ և այլն:

Ահա սրանք են այդ փաստարկները: Առայժմ որպէս ենթադրություն ասենք, որ բանասերների կարծիքը, որը հիմնված է գլխավորապէս վերոհիշյալ փաստերի վրա, այնքան էլ հիմնավոր ու համոզիչ չէ: «Տարեգրքի» վերջին

4 Տե՛ս «Տարեգրք», Վենետիկ, էջ 226, ծան. (*):

5 Նույն տեղում, էջ 1, ծան.:

6 «Տարեգրք», Մոսկվա, Առաջաբան, էջ Ա:

7 Նույն տեղում, էջ 106: «Տարեգրք» արարեալ Սմբատայ Սպարապետի Հայոց որդոյ Կոստանդնույ կոմսին Կոսիկոսոյ», Փարիզ, 1859, էջ 116 (այս և հետագա ընդգծումները մերն են — Լ. Բ.):

8 Նույն տեղում, Մոսկվա, էջ 99, Փարիզ, էջ 110:

9 Նույն տեղում, Վենետիկ, էջ 208:

10 Նույն տեղում, Վենետիկ, էջ 227, Մոսկվա, էջ 114, Փարիզ, էջ 123:

11 Նույն տեղում, Վենետիկ, էջ 228, Մոսկվա, էջ 115, Փարիզ, էջ 124:

12 Նույն տեղում, Վենետիկ, էջ 227, Մոսկվա, էջ 114, Փարիզ, էջ 123:

13 Նույն տեղում, Վենետիկ, էջ 228, Մոսկվա, էջ 115, Փարիզ, էջ 124:

14 Նույն տեղում, Վենետիկ, էջ 227, Մոսկվա, էջ 114, Փարիզ, էջ 123:

հրատարակություն ուղադիր ուսումնասիրությունը, մեկ թվում է, չի խոսում այդ կարծիքի օգտին և ահա թե ինչու:

Ս. Ազրլյանը, խոսելով «Տարեգրքի» Մոսկվայի և Փարիզի հրատարակությունների մասին, եզրակացնում է, թե «ամենք ալ շատ հեռու կը մնան Սմբատի ապրած, կամ անոր անմիջական չաջորդող դարերու գործ ըլլալէ. ականյայտի բան է այս, երբ զանոնք համեմատենք ներկա հրատարակութեան օրինակին հետ, ասօր մէջ՝ լեզուական և պատմական տուեալները այնքան մաքուր և հարադատ են, որ խորհիլ կուտան թէ Սմբատի Տարեգիրքին ցարդ ծանօթ օրինակներէն, ասիկա միայն իրական մերձաւորութիւն ունի Սմբատի հարադատ խմբագրութեան հետ, և վստահօրէն կարելի է համարել «յկու ժո՞ղարու» Հ. Ալիշանի հետ»։ Այնուհետեւ ընդգծում է, թե իր նպատակն է եղել ուսումնասիրել ծանոթացնելու Սմբատի գործի ընտիր և հնագույն օրինակի հետ «ասով՝ առիթ տալ որ Հայ Կիլիկիան մեր թագաւորութեան ոչ նուազ փառահեղ պատմութիւնը նորանոր քննական լուսաբանութիւններով ճոխանալ»¹⁵։ Այն ձեռագրում, որը տպագրել է Ս. Ազրլյանը և որը հիմք պետք է ծառայի «Տարեգրքի»՝ Սմբատի հեղինակության հարցի ճիշտ լուծմանը, Սմբատի ծննդյան մասին խոսք չկալ։ Լեոն II-ի թագադրման կապակցությամբ վերը բերված վկայությունը տրամաբանական չէ. Լեոն II-ը թագադրվել է 1198 թ., երբ Սմբատ սպարապետը դեռ ծնված չէր. Լեոն II-ը մահացել է 1219 թ., երբ Սմբատը 11 տարեկան է եղել, հետևապէս նա չէր կարող իր մասին գրել «յորոց մի ես եմ»։

Եզակի և հոգնակի դեմքերով գրվածները նույնպէս չեն տրամաբանվում։ Բերում ենք այդ հատվածները։

«Եւ թագաւորահայրն պարոն Կոստանդին ու Սմբատ գունդստապլն եկին մտան ի Տարսուս... թագաւորն հեծելովն ի հետ էլ, և թագաւորահայրն և Սմբատ գունդստապլն, և հասին ի տեղի մի որ Մայծառ ասեն։ Նա (սուլթան Քայ Խոսրովը—Լ. Բ.) դարձաւ անթիւ շատ ի յետ։ Մեք դիպա՛մ ու... իանդաբեցաք, և կոտորելով վարեցաք ինչվի Պուտանդէ։

Նա յետ այլ մէկ տարւոյ, ի թուին 695 (=1246)... պատեցին զՏարսուս, թագաւորահայրն և եւ Սմբատ գունդստապլս մտաք ի Տարսուս։ Եւ եթէ զամէն նեղութիւն բաբնաց ու զկոնի դրեալ էաք նա կարի շատ էր լեալ»¹⁶։ Նկատենք, որ հմուտ ու անվանի գորավարը այսպէս երբեք չէր գրի, այդ մասին թիչ հետո։

Ուղադրություն պետք է դարձնել մեր կողմից ընդգծված բառերի վրա։ Բացատրելի չէ, թե ինչու «մեք»-ից առաջ գունդստաբլ Սմբատի մասին երրորդ դեմքով է նշված և «մեք»-ից վեց տող հետո կրկնվում է նույն նախադասությունը, սակայն այս անգամ «ես» բառի հավելումով։ Այդ «ես»-ը հանդես է գալիս և հաջորդ հատվածի վերջում, առաջին «ես»-ից մոտ մեկ էջ հետո Կարեոր է նշել, որ ամբողջ «Տարեգրքում» միայն այս մեկ թերթի վրա է Սմբատի մասին երկու անգամ առաջին դեմքով ասված, մյուս բոլոր դեպքերում՝ երրորդ դեմքով։ Դիտելի է նաև, որ ամբողջ «Տարեգրքում» Սմբատը տիտղոսավորված է «սպարապետ» բառով, մինչդեռ «ես»-երը պարունակող նշված այդ թերթում հանկարծ նա 4 անգամ ներկայացվում է «գունդստաբլ»։

¹⁵ Նույն տեղում, Վենետիկ, Առաջաբան, էջ ԺԲ։

¹⁶ Նույն տեղում, Վենետիկ, էջ 227։

տիտղոսով: Այդ թերթին նախորդող և հաջորդող էջերում հաճախ ենք հանդիպում՝ «սպարապետն հայոց Սմբատ»¹⁷, «զորդիսն սպարապետին Հայոց Սմբատայ»¹⁸, «որդի Սմբատայ սպարապետի»¹⁹ և շատ նման դարձվածքների:

Ուշագրավ է նաև, որ միայն մեկ անգամ, այն էլ երկրորդ «ես»-ը սլաւոնակող էջում է Սմբատը Հեթումի մասին ասում. «Իմ եղբայրն Հեթում թագաւորն», մյուս բոլոր դեպքերում գրված է՝ «թագաւոր հայոց», «արքա հայոց»: Անդամ Հեթում I-ի թագադրման կապակցությամբ գրում է. «Եւ եղին թագաւոր զՀեթում որդի Կոստանդեայ պայլոն Հայոց»²⁰, Հեթումի մահվան կապակցությամբ էլ նշում է. «Թագաւորն Հայոց Հեթում փոխեցաւ ի կենցաղոյս»²¹ և ուրիշ ոչինչ: Առաջին դեպքում, եթե գրողը Սմբատը լիներ, նա անպայման պետք է որ հպարտությամբ ցույց տար իր ազգակցական կապը Հեթումի և Կոստանդինի հետ, երկրորդ դեպքում էլ, եթե Սմբատը լիներ գրողը, նա պետք է որ անպայման արտահայտեր իր վիշտը, մի բան, որ չկա ոչ առաջին և ոչ էլ երկրորդ դեպքի առթիվ գրված: Եթե Սմբատը լիներ «Տարեգրքի» հեղինակը, նա իր մասին խոսելիս չէր գրի՝ «թագաւորաեղբայրն և սպարապետն հայոց»²²:

Եթե Սմբատը լիներ հեղինակը, ապա նա գոնե մեկ անգամ և, հատկապես ստորև բերվող հատվածում, հպարտությամբ պիտի որ շեշտեր, ընդգծեր, որ գրվածը իր հորն է վերաբերում: Այնտեղ կարդում ենք. «Ի թուին ԶԺԲ (712=1263) սուգ անբերելի ժամանեաց աշխարհին Կիլիկիոյ, զի ամենայն ոք մարդարեական հոգւով խօսէր թէ շինութիւն այսմ աշխարհի ի կենդանութեան արքայահօրն Կոստանդեայ է...»²³, նա չէր բավարարվի անընդհատ գրելով թագավորահայր՝ «թագաւորահայրն Կոստանդին», «Կոստանդեայ պայլոն Հայոց»²⁴ և այլն: Եթե վերջինիս մահը սուգ է պատճառել Կիլիկիա աշխարհին, ապա որդին պետք է որ ավելի խորը կրեր այդ վիշտը և գրչով արտահայտեր այն, սակայն «Տարեգրքում» չափազանց սառն ու անտարբեր ձևով է արձանագրված այդ իրողությունը. այնտեղ կարդում ենք՝ «թագաւորահայրն Կոստանդին փոխեցաւ ի կենցաղոյս բարիոք խոստովանութեամբ առ Քրիստոս: Եւ էր նա իբրեւ զնահապետ երկրին Կիլիկիոյ»²⁵, չկա որդիական-ազգակցական զգացում: Հեղինակի մոտ չկա նաև ծնողական զգացում, նույնպիսի անտարբերությամբ նա գրում է՝ «Հանգեաւ ի Քրիստոս միւս այլ որդին Սմբատայ սպարապետին»²⁶:

Եթե «Տարեգրքի» հեղինակը Սմբատը լիներ, իր Լևոն եղբոր մահվան կապակցությամբ չէր գրի. «Եւ յայնմ օրէ եմուտ տրտմութիւն առ թագաւորահայրն Կոստանդին և առ թագաւորն Հեթում, և առ ամենայն ազգատոհմն նոցին»²⁷:

17 Նույն տեղում, էջ 235:

18 Նույն տեղում, էջ 244:

19 Նույն տեղում, էջ 251:

20 Նույն տեղում, էջ 225:

21 Նույն տեղում, էջ 252:

22 Նույն տեղում, էջ 238:

23 Նույն տեղում, էջ 237:

24 Նույն տեղում, էջ 225:

25 Նույն տեղում, էջ 237—238:

26 Նույն տեղում, էջ 252:

27 Նույն տեղում, էջ 237:

Ընդհանրապես պետք է նկատենք, որ հեղինակը Հեթումյանների մասին բավական անտարբերությամբ է խոսում, բացակայում է տոհմիկ պատմագիրներին հատուկ կրքոտությունն ու սնապարծությունը, որը նույնպես «Տարեգիրքը» Սմբատի գրչին չպատկանելու հարցադրման օգտին է խոսում: Նշելով, որ Հեթում I-ը մեծ զորքով արշավել էր դեպի Տավրոսի ստորոտները և շատ պատերազմական ավար էր ձեռք բերել, գրում է. «Բագում աւարսու դարձաւ յաշխարհն իւր»²⁸. Թագավորի եղբայրը և երկրի սպարապետը, հասկանալի է, այդպես չէր գրի. կարծեք խոսքը գնում է օտար թագավորի և օտար աշխարհի մասին, և այդ դեպքում է Հեթումյանների մասին գրված գրեթե բոլոր հատվածներում: Խոսելով Բեյբարս սուլթանի դեպի Կիլիկիա կատարած արշավանքի մասին, հեղինակը գրում է. «Իսկ թագաւորն Հայոց Հեթում հանդերձ հարազատօք իւրովք Սմբատիւ, որ և տէր գոլով անմատչելի զղեկին Պապեոսին, Սմբատայ կլային, Աստոսայ, Ֆարխնուցն, Պապատուլին, Սիկոյ, և Մուռանդնին...»²⁹, և այլն:

Վերոշարադրյալը բացատրելի Սմբատի, իբրև հեղինակի, համեստությամբ, որով օժտված էին միջնադարի հայ մշակույթի ականավոր շատ ներկայացուցիչներ, հնարավոր չէ. այդ համեստությունը չեն արտացոլում, արտահայտում ո՛չ «ես»-երը և ո՛չ էլ ստորև բերվող հատվածը. «Զայն տեսնալ առիագոյն զինուորն. սպարապետն Հայոց Սմբատ, հարադատն արքային, և առեալ նիզակ գնայր ի վերայ (թշնամու—Լ. Բ.) և դիաթաւալ ի նոցանէ յերկիր քնկենոյր, և ազատէր ի նոցանէ զփեսայն իւր Վահրամ և քաջապէս մղէր զնոսա յիջեվանս իւրեանց»³⁰: Համեստությամբ օժտված Սմբատը դժվար թե իր մասին այդպես գրեր: Ո՛չ «ես»-երն են Սմբատի գրչին պատկանում, ո՛չ էլ նրան վերագրված քաջագործությունը, ինչպես նաև ամբողջ «Տարեգիրքը»: Նրանում Սմբատին երրորդ դեմքով ներկայացված լինելու հանգամանքը Սմբատի համեստությամբ հնարավոր չէ բացատրել, դա բացառվում է:

Ուշադրության արժանի է նաև մի այլ կարևոր հանգամանք: Սմբատը կարող էր շատ բաներում սխալվել, բայց նա երբեք չէր սխալվի թաթարների մոտ իր գնալու տարեթվի հարցում: Հայտնի է, որ նա Ղարաղորում է մեկնել 1246 թ.: Այդ մասին որոշակի հայտնում է Հեթում II թագավորը. «ՈՂԵ (695=1246) թագաւորն Հեղոմ առաքեաց զեղբայրն իւր պարոն Սմպաթն գունտուստապլն ի Կիուկ խանն»³¹: Մինչդեռ «Տարեգրքում» կարդում ենք. «Ի թուին 697 (=1248) գնացի ես Սմբատ գունդստապլս ի թաթարն եւ թուին 699 (=1250) դարձայ առ իմ եղբայրն Հեթում թագաւորն»³²:

Մի շատ կարևոր հանգամանք նույնպես չենք կարող հաշվի չառնել. Կեսարիա քաղաքում մոնղոլ զորավար Բաչու նոյինի հետ հանդիպումը, վարած բանակցությունները և, որ զխավորն է, Ղարաղորում կատարած այցը, որը

²⁸ Նույն տեղում:

²⁹ Նույն տեղում, էջ 244:

³⁰ Նույն տեղում, էջ 235:

³¹ Տե՛ս «Մանր ժամանակագրություններ XIII—XVIII դդ.», կազմեց՝ Վ. Ա. Հակոբյան, Խատ. I, Երևան, 1951, էջ 81:

³² «Տարեգիրք», Վենետիկ, էջ 228: Աշ. Դալստյանն այս կապակցությամբ նշում է, որ «Սմբատի այս վկայությունը դժվար է վստահելի համարել, քանի որ Սմբատի ամենահին ձեռագրում (նկատի ունի Ազրլյանի ձեռագիրը—Լ. Բ.) այդ նախադասությունը բացակայում է: Այն... հավաստում է գոյություն ունեցող մյուս փաստերին», տե՛ս նրա «Սմբատ սպարապետ» աշխատության (Երևան, 1961) էջ 49-ի 3-րդ ծանոթություն:

տեւել է 4 տարի, խոշոր իրադարձություններ էին Սմբատ սպարապետի կյանքում: Վերջինիցս ստացած տպավորություններն այնքան ուժեղ են եղել, որ նա այդ մասին հանգամանորեն գրել է 1247 թ. Սամարղանդից Կիպրոսի թագավոր Հենրիխ Լուդինյանին ուղարկած նամակում: Այնտեղ հետաքրքիր ու կարևոր փաստեր են բերված մոնղոլների նվաճումների, նրանց նիստ ու կացի, սովորությունների, Իրանին ու միջինասիական երկրներին մոնղոլ նվաճողների պատճառած ավերածությունների, նրանց տիրապետության տակ ընկած քրիստոնյա բնակչության վիճակի և շատ այլ հարցերի մասին³³: Այդ բոլորի մասին, սակայն, «Տարեգրքում» ոչինչ չի ասված:

Կիլիկյան հայկական թագավորության համար առավել կարևոր իրադարձություն է եղել Հեթում I-ի Ղարաղորում ղնալը, Մանգու խանի հետ հանդիպումն ու բանակցությունները, Հեթումի ներկայացրած պահանջները, նրանց միջև կնքված դաշինքը, Հեթումին տրված արտոնությունները, որոնց մասին հպարտությամբ գրել է Հեթում պատմագիրը, որի աղբյուրը, իր իսկ վկայությամբ, հանդիսացել է նրա հորեղբայր Սմբատ սպարապետը: «Ի Մանգոյ խանէ մինչև ի մահ Հուլաւոնի պատմէ զոր միանգամ լուաւ ի բեուոյ (կարգա հորեղբայր—Լ. Բ.) իւրմէ՝ որ առաջիկայ գտաւ եղելոցն ամենայնի»³⁴: Մինչդեռ «Տարեգրքում» այդ բոլորի մասին գրված է. «Եւ յայնժամ, թագաւորն առեալ զամենայն ցանկալի տեսողաց ընծայսն, զնաց առ խանն Մանգոյ և մատոյց նմա, և խանն ուրախութեամբ ընկալաւ զթագաւորն Հեթում, և զինչ և խնդրեաց ի նմանէ՝ շնորհեաց նմա, և եղ ի սպասաւորաց իւրոց ընդ թագաւորին դալ յաշխարհ իւր Կիլիկիա...»³⁵, և ուրիշ ոչինչ: Պետականորեն մտածող Սմբատ սպարապետը պիտի որ գիտակցած լիներ մոնղոլների հետ բանակցությունների ճակատագրական նշանակությունը Կիլիկիայի համար և չէր բավարարվի միայն այդքանով, մեկ էլ նշելով՝ թե այսինչ թվին գնացել եմ թաթարների մոտ և այսինչ թվին վերադարձել:

Դիտելի է նաև մի ոչ պակաս կարևոր հանգամանք: Սմբատ սպարապետը տաղանդավոր զորավար է եղել, 50 տարի շարունակ գլխավորել է բանակը, շատ ու շատ արյունահեղ ու համառ մարտեր է վարել օտար նվաճողների դեմ, պաշտպանել պետության ազատությունն ու անկախությունը, սակայն «Տարեգրքից» այդ բոլորովին չի երևում: Բոլոր դեպքերում բանակներին առաջնորդում են կամ Հեթում I-ը, կամ նրա որդիները, կամ էլ Կոստանդին թագավորահայրը և կարծեք իբրև կցորդ՝ անպայման Սմբատ սպարապետը: Տարեգիրը մինչև 1259 թ. Սմբատ սպարապետի կենսագրության և ընդհանրապես դործունեության մասին ոչինչ չի գրում, եթե չհաշվենք, հետսամուտ՝ Տարսուսի պաշտպանության կապակցությամբ նրա անվան հիշատակումը և թաթարների մոտ գնալու մասին ակնարկը: 1259 թ. հետո էլ միայն մի տեղ է Սմբատին պատերազմի դաշտում ցույց տալիս, այն էլ իբրև «արիագոյն պինվորի», որ իր վեսային աղատելու համար հարձակվում է թշնամիների վրա և փախուստի մատնում նրանց³⁶: Սմբատն իբրև սպարապետ—զորքերի գլխավոր հրամանատար, չկա, լրիվ անտեսված է, անդամ չի ասված, թե երբ է նա նշանակվել այդ պաշտոնում և ում կողմից:

³³ Տե՛ս Ա. Ղ. Գալստյան, նշվ. աշխ., էջ 84—85:

³⁴ «Հեթում պատմիչ թաթարաց», Վենետիկ, 1542, էջ 68:

³⁵ «Տարեգիրք», Վենետիկ, էջ 230:

³⁶ Նույն տեղում, էջ 235:

Հայ միջնադարի երկու ականավոր հոգևոր գործիչներ էլ են գրել իրենց ապրած ժամանակաշրջանի պատմությունը, բայց միաժամանակ հընթացս դեպքերի, շարադրել են նաև իրենց կենսագրությունը. այլ կերպ չէր էլ լինի. քանի որ նրանք գտնվել են քաղաքական կյանքի բուռն իրադարձությունների ոլորտում, ակտիվ գործող անձեր են եղել, քաղաքականություն են վարել ու պատմություն ստեղծել: Դրանք են կաթողիկոս Հովհաննես Դրասխանակերտցին և մետրապոլիտ Ստ. Օրբելյանը:

Եթե Սմբատ սպարապետը լիներ տարեգրքի հեղինակը, ապա նա էլ այդպես կվարվեր, այլ կերպ հնարավոր չէ պատկերացնել: Պետության մեջ նրա գրաված դիրքը, ծավալած բեղմնավոր ռազմա-քաղաքական ու դիվանագիտական բուռն գործունեությունը կթելադրեին այդպես գրելու, և պատմությունը շատ բանով շահած կլիներ, կունենայինք իսկական պատմություն, և ոչ թե՛ հիշատակարանների բնույթ կրող տարեգրություն:

Պետք է հաշվի առնել նաև մի ոչ պակաս կարևոր հանգամանք ևս: Տարեգրքում պատերազմական գործողությունների նկարագրություններն էլ ակընհայտորեն ցույց են տալիս, որ դրանք չեն կարող հմուտ զորավարի գրչին պատկանել: Ահա թե ինչպես է ներկայացված Մառիի նշանավոր ճակատամարտը: Նախ ասված է, թե ճակատամարտից առաջ Հեթում թագավորը զորքերը բաժանել էր երեք մասի, մի մասը իր հետ տարել էր Աբաղա խանի մոտ նրանից օգնություն խնդրելու համար, մի մասը թողել էր արքունիքում (Դուռ), մի մասն էլ ուղարկել էր թշնամու դեմ կռվելու, որը և հասնելով Մառի կռված վայրը «յալղմանէ շարին ի փախուստ դարձան հաւատացելոցն զօրք առանց մարտի և պատերազմի: Եւ որդիք թագաւորին պարոնն Հայոց Լեւոն, և եղբայրն իւր Թորոս դարձան ի զօրաց և գնացին ընդդէմ անօրինացն պատերազմել ընդ նոսա, որ և դժորոս սպանին ի նոյն մարտ պատերազմի, և դպարոնն Հայոց զԼեւոն ընդ ձեռամբ ածեալ կալան, և որդի սպարապետին Հայոց Սմբատայ զՎասիլ մականուն Թաթարն, և այլս ընդ նոսա»³⁷: Եվ ուրիշ ոչինչ: Զի ասված, թե ո՛վ է եղել զորքի հրամանատարը, որտե՞ղ է եղել Սմբատ սպարապետը, մասնակցե՞լ է մարտին թե ոչ, դորքը ինչո՞ւ է հենց սկզբից փախուստի դիմել, Լեւոնն ու Թորոսը ինչպե՞ս են փախչող զորքին ետ դարձրել, հետո այդ զորքը ինչպես է կռվել, թշնամին չի երևում նկարագրությունում, ճակատամարտը չի տրվում, մինչդեռ Թորոսը սպանվում է, իսկ Լեւոնին էլ մյուսների հետ գերի են վերցնում, բայց ինչ պայմաններում, ինչպե՞ս՝ այդ բոլոր հարցերը մնում են անպատասխան:

Խոսելով Հեթում 1-ի 1264 թ. Հալեպ կատարած արշավանքի մասին, տարեգիրը գրում է. «Զօրաժողով արար զզօրս իւր և բաղում ռամիկ՝ հետեւակօք արշաւեաց ի դաւառն Հալսպայ... և շահեցան անդ ինչս և ծառայս սակաւս, որ և անդ մաղապուրծ եղեալ արքայն Հեթում, դի առեալ ի սպասաւորաց իւրոց Բ ներքինիս, և յիշխանաց իւրոց զԿոստանդին Ապլհասնանց և բաժանեալ ի զօրացն եմուտ ի քաղաքն յայն և գնայր անհոգութեամբ, առանց զրահի և սաղաւարտի...»: Անօրեններից քսան հոգի զինված հարձակվում են Հեթումի վրա, նրա ուղեկիցները կռվի են բռնվում թշնամու հետ, թագավորը մի կերպ ազատվում է և «եկն աշխարհն իւր բազում աւառաւ»³⁸: Զի պատճառաբան-

37 Նույն տեղում, էջ 246—247:

38 Նույն տեղում, էջ 242:

ված, թե արշավանքի ելած թագավորն ինչու պետք է անգն հեռանար իր բանակից և մտներ թշնամու քաղաքը, և հետո այդ բաղում ավարը որտեղի՞ց է վերցված, չէ՞ որ վերևում ասված է սախավ ինչքի և ծառաների ավարառության մասին միայն: Հմուտ զորավարը, հասկանալի է, այդպես չէր գրի ու ներկայացնի իր թագավորին, այն էլ իր եղբորը: Նման նկարագրությունները շատ են: Բավարարվենք բերվածով:

* * *

Մեր կողմից վերը տրված փաստարկները հիմք են տալիս ենթադրելու, որ «Տարեգրքի» հեղինակը Սմբատ սպարապետը չէ, այլ մեկ ուրիշը, որի անունը մեզ դեռ հայտնի չէ. երևում է, որ նա Սմբատի ժամանակակիցներից է, հավանաբար Սմբատի հետ միասին պատերազմական գործողություններին մասնակցած: Ս. Աղբլյանի հրատարակությունում, Սիմեոն վարդապետի հիշատակարանից հետո հանդիպող մոտ երեք էջերում հոգնակի առաջին դեմքով գրված մի քանի ականարկները, որ բերեցինք վերևում, նման հավանական եզրակացության հանգեցրու հիմք են տալիս:

Տարեգրքի ամենահին ձեռագրում (Վենետիկի) շարադրանքը ընդհատվում է 1229 թ. և շարունակվում 1252 թ.: Բաց թողնված 23 տարվա իրադարձությունների մասին, հավանաբար, գրված է եղել, բայց թերթերը կորել են: Հետագայում ոմն Սիմեոն վարդապետ Ապարանցի ձեռագրի ընդհատված տեղում գրում է հիշատակարան հետևյալ բովանդակությամբ.

ա) Յիշեցէք ի Քրիստոս և Աստուած ողորմի ասացէք: Ես Սիմեոն վարդապետս Ապարանցի դայս գիրս գրեցի:

բ) Ամեն մարդ զիր կեանքն իմանայ, շուտով խոստովանի, իւր մեղաց դառնայ³⁹: Այս հիշատակարանը պահպանվել է հնագույն այդ ձեռագրում, մյուսները չունեն, չունեն նաև 1049 թ. դեպքերի նկարագրությունից հետո տրված Վասիլի հիշատակարանը «Զախտապաշար գրողս Վասիլ յիշեսցիք ի Քրիստոս» բովանդակությամբ⁴⁰:

Մոսկվայում և Փարիզում հրատարակված ձեռագրերում հնագույն ձեռագրի նշված բաց տեղը որոշ չափով լրացված է: Նրանցում երկուեկես-երեք էջերի վրա տրված են 1240-ական թթ. իրադարձությունները, սակայն նորից 1230—1241 թթ. բաց են մնացել: Լրացված շարադրանքում հիշատակվում են Զաբել թագուհու Սելեկիա զնալը, մոնղոլների ներխուժումը Բկոնիա, սուլթանի ընտանիքը մոնղոլներին հանձնելը, սելջուկների կողմից Տարսուս քաղաքի պաշարումը և վերջում էլ Սմբատ սպարապետի ուղևորությունը թաթարների մոտ: Այդ լրացված հատվածում է, որ Սմբատն իր մասին եզակի և հոգնակի առաջին դեմքերով է խոսում ու իրեն տիտղոսավորում գունդստաբլ բառով: Այդ մասին վերևում արդեն ասվել է: Լրացված իր ոճով տարբերվում է «Տարեգրքի» ամբողջ շարադրանքից:

Թեև ևս հնարավոր լինի ենթադրել, թե լրացված հատվածի հեղինակը մի

³⁹ Նույն տեղում, էջ 226: Նույն էջի 31-րդ ծանոթության մեջ Ս. Աղբլյանը գրում է. «Սիմեոն վարդապետ այս երկրորդ անգամ (ա. թղ. 38ր) կրսէ թէ Տարեգրքին գրողն ինքն ըլլայ: Բայց իր տկար գրչութիւնը՝ Տարեգրքի գեղեցիկ ու յստակ բովանդակութիւնը շատ հեռու կը մնայ, ուստի հակառակը կ'ապացուցանե, այն է՝ թէ ինք պարզ ստացող յիշատակագիր մըն է, բուն գրիչն է Վասիլ (տե՛ս աստ, էջ 47, ընդգծումը Աղբլյանինն է—Լ. Բ.):

⁴⁰ Նույն տեղում, էջ 47:

անհայտ գրիչ է, որը հավանաբար մասնակցած պետք է լինի Տարսուսի պաշտպանական մարտերին: Նման ենթադրություն համար հիմք կարող է ծառայել ականառու այն փաստը, որ ամբողջ «Տարեգրքում» միայն Տարսուսի համար մղված պատերազմն է համեմատաբար մանրամասն տրված: «Եւ եթէ զամէն նեղութիւն բաբնաց ու զկռիւ գրեալ էաք նա կարի շատ էր լեալ: Հայնց որ ի ջրմտին դեհն ու ի ջրելին աղէկ նետրնկէց մի փլուցին զպարիսպն. շատք մեռան յերկուց կողմանց, բայց ի դրացէն հարիւրապատիկ զի ունեաք ընդ ներքս աղէկ ֆռանկի շարխաւորք»⁴¹: Ընդգծված ստորոգյալը հատվածի հեղինակինն է և ոչ թե Սմբատինը: Հոգնակի առաջին դեմքով գրվածներն էլ նրան են վերաբերում և ոչ՝ Սմբատին: Սմբատը չէր կարող գրել, թե «յետ երկու տարույ (1246 թ. հետո—Լ. Բ.) գողացաք զՊռականա»⁴², քանի որ 1246 թ. նա մեկնել էր Ղարաղորում, հետևապես չէր կարող մասնակցած լինել Պռականայի գրավմանը:

Ի դեպ, դիտելի է նաև, որ Սմբատի՝ թաթարների մոտ գնալու և վերադառնալու մասին ականարկը չի կապված ո՛չ նախորդ և ո՛չ հաջորդ շարադրանքի հետ և, որ կարևորն է՝ այն ժամանակվա պայմաններում երկու տարվա ընթացքում Կիլիկիայից գնալ Ղարաղորում ու վերադառնալ հնարավոր չէր:

Այդ է վկայում հենց ինքը Սմբատ սպարապետը: Կիպրոսի Հենրիխ Լուզինյան թագավորին Սամարղանդից գրած նամակում, որի մասին նշվել է վերևում, նա գրել է, որ շնայած մոտ ութ ամիս գիշեր ու ցերեկ ճանապարհորդել է, բայց, ինչպես իրեն ասել են, անցել է իր երկրի և մոնղոլների խանի՝ նրանց միապետի նստավայրի միջև ընկած ճանապարհի կեսը միայն⁴³:

Հաշվի առնելով Սմբատի այս վկայությունը, մեզ անհավանական է թվում այն կարծիքը, թե իբր Սմբատ սպարապետը 1246 թ. արդեն գտնվել է մոնղոլական մեծ խանի նստավայրում՝ Ղարաղորումում և հաջող բանակցություններ է վարել Գույուկ խաֆանի հետ⁴⁴: Կարծում ենք, որ այդ բանակցությունները, ամենայն հավանականությամբ, տեղի պետք է ունեցած լինեին 1247 թ. վերջերին կամ 1248 թ. սկզբներին:

Ինչ վերաբերում է նորամուտ հատվածում «Ես Սմբատ գունդստապլս» երկու տեղ հանդիպող ականարկներին, ապա նորից ենթադրաբար կարելի է ասել, որ հատվածը ավելացնողն է գիտակցված գրել, Սմբատին ներկայացնելով իբրև գրվածքի հեղինակ, դրանով իսկ արժեքավորելով իր կատարած գործը՝ նա արտագրել է այնպիսի մեծության գրածը, ինչպիսին Սմբատ սպարապետն է: Եթե առաջին հիշատակարանում Վասիլը հանդես է գալիս «Տա-

⁴¹ Նույն տեղում, էջ 227:

⁴² Նույն տեղում, էջ 228:

⁴³ См. С м б а т С п а р а п е т, Летопись, перевод с древнеармянского, предисловие и примечания А. Галстяна, Ереван, 1974, стр. XIX.

⁴⁴ Նույն տեղում, էջ XXI:

րեգիրքը» գրողի-գրչի դերում, ապա անհայտ հեղինակը (թերևս Սիմեոն վարդապետ Ապարանցին) կոնկրետ նշում է, այն էլ միջանկյալ հատվածից առաջ՝ «զայս գիրս գրեցի». սրանից կարելի է կռահել, որ նա նկատի է ունեցել հենց այդ լրացված հատվածը և ոչ թե ամբողջ «Տարեգիրքը»: Մեզ անհայտ պատճառներով այդ հատվածը Վենետիկի ձեռագրում չի պահպանվել, թերևս այն էլ է կորել և մնացել է միայն հիշատակարանը:

Ընչևիցէ. մեր այս հոդվածում փորձեցինք ցույց տալ Սմբատ սպարապետի՝ «Տարեգրքի» հեղինակ լինելու անհավանականությունը: Թե մեր փաստարկներն ու կոմպանիները ինչքան են համոզիչ՝ այդ թողնում ենք մասնագետ ընթերցողներին:

«Տարեգրքի» իսկական հեղինակի ով լինելն առայժմ դժվար է ասել. XIV դարի առաջին երկու տասնամյակներից Կիլիկիայից մեզ հասած մի քանի հիշատակարաններում մեծ ակնածություն մեծ հիշված է ոմն հոգևորական Վասիլի անունը՝ «պատուական քահանա»⁴⁵, «Յիշեսչիք և զՎասիլ քահանայ Հռոմկլացի և զամենայն առդիւնաբարսն, ոյք ազնական եղեն ընչիւք իւրեանց ի սուրբ դիրքս այս»⁴⁶ և այլն: Թերևս այդ Վասիլը նույնն է, որը նշված է «Տարեգրքի» հիշատակարանում, իսկ արդյո՞ք նա է ամբողջ «Տարեգրքի» հեղինակը, դժվար է ստուգապես ասել:

Անկախ նրանից, թե ով է մեզ հասած այդ Տարեգրքի հեղինակը, նրա հատկապես իբրև XIII դարի պատմության ստուգապատում սկզբնաղբյուրի, պատմական արժեքը չափազանց մեծ է, այն կարևոր ու հարուստ տեղեկություններ է հաղորդում Կիլիկիայում նշված պատմաշրջանում ու գոյություն ունեցած միջֆեոդալական հակամարտությունների, հայկական իշխանության և ապա թագավորության և խաչակիր իշխանությունների փոխհարաբերությունների, Իկոնիայի սուլթանության և Եգիպտոսի տիրակալների՝ Կիլիկյան հայկական թագավորության նկատմամբ վարած նվաճողական քաղաքականության, հայ-մոնղոլական դաշնակցության ու դինակցության, Եգիպտոսի դեմ նրանց համատեղ պայքարի և մի շարք այլ հարցերի մասին:

СМБАТ СПАРАПЕТ И ВОПРОС АВТОРСТВА «ЛЕТОПИСИ»

Доктор историч. наук Л. О. БАБАЯН

(Резюме)

В статье опровергается принятое в арменоведении мнение о том, что автором «Летописи» конца XIII в. является киликийский государственный и военный деятель Смба́т Спарапет. Трехстраничная вставка, дав-

⁴⁵ Տե՛ս «Ժ՛ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1950, էջ 56:

⁴⁶ Նույն տեղում, էջ 76:

шая основание исследователям прийти к этому заключению, отсутствует в самой древней и полной рукописи и, как предполагается в статье, не принадлежит автору «Летописи». Этот отрывок, видимо, был написан впоследствии неизвестным автором.

Исследование древнейшей рукописи, изданной С. Агляном в Венеции в 1956 г., дает основание заключить, что она, как по своему содержанию и стилю изложения, так и по описанию событий, в особенности военных операций, не может быть сочинением талантливого полководца. Можно предположить, что неизвестный автор «Летописи» был современником Смбата или жил чуть позже.